

7. Խաչակրաց մկրտութեան մասուռը. — 635 ին-
 էօմէր խալիֆան Երուսաղէմի գրաւումէն յետոյ այցե-
 լեց Սողոմոնեան Տաճարին հարթավայրը եւ մաքրել
 տալով զայն՝ աղօթարան մը շինեց հոն: 670 ին, Ար-
 գուլֆ եպս. իր ուխտաւորութեան՝ տեսած էր նոյն
 շէնքը: Յետոյ Ապտ էլ Մէլէք իպն Մէրուան նոյն
 տեղւոյն վրայ շինեց փառաւոր մզկիթ մը (688-692).
 բիւզանդական ճարտարապետներու ձեռքով կառոյց
 այն մզկիթը զոր կը ճանչնան Եւրոպացիք իբր Էօլիթի
 մզկիթ, որուն ստոյգ անունն է Քուպլիք Էս սաֆրա,
 (Ապառաժի գմբէթը): Ապտուլլահ էլ իմալ էլ Մամուն
 (813-833) կատարելագործեց անոր գործը: 1022 ին,
 Ալի Տահէր էլ Իզազ, Հաքէմի որդին՝ երկրաշարժէ
 կործանուած գմբէթը վերաշինեց:

Խաչակիրները երբ Երուսաղէմը գրաւեցին, մըզ-
 կիթը եկեղեցիի վերածեցին, Templum Domini անու-
 նով, առանց մեծ փոփոխութեան: Կեդրոնական ա-
 պառաժը ծածկուեցաւ քանդակեալ մարմարիոնի զե-
 ղեցիկ ծածքով մը և գործածուեցաւ իբր պատուան-
 դան Աւագ սեղանին:

Այս տեղւոյն քրիստոնէական առաջին շէնքերէն
 կը նկատուի Խաչակրաց մկրտութեան մասուռը: Մզկի-
 թին հիւսիս-արեւմուտքը կը նշմարուի գմբէթազարդ
 զեղեցիկ ութանկիւնի մը: Ութը որմածակերը սկիզ-
 բէն բաց կը մնային: Յետնայարկ կամարաքիւերը կը
 հանգչին անկիւններու մէջ զետեղուած երեք սիւնակ-
 ներուն վրայ: Այս ձեւը, ինչպէս խոյակներունը եւ
 պատուանդանին յատակազիծը փոխ առնուած են Ս.
 Յարութեան եկեղեցիին դրան ձևէն: Մուտքին վրայ
 քանդակուած է երկայն արձանագրութիւն մը որ կը
 յայտնէ թէ 1200 ին նորոգուած է: Տիրող կարծիքնե-